

Մ Ե Հ Ե Կ Ա Ն Ա Մ Ի Ս .

Ա .

Ո՛ր ես ուզում տանել Հայի միտքը՝ Մեհեկան ամիս։ Զո տամարադիրն այնպիսի տօներ է կարգել եկեղեցու մէջ՝ այնպիսի յիշատակներ, որ ակամայ յուզուում է մարդու սիրտը և ձգտում է ամեն ինչ միահաւաքում և միացնելու և իւրացնելու։

Մի կողմից՝ մտքիս առաջ են գալիս Տեառնընդառաջը, քրիստոնէութեան առաջին քարոզութիւնն և Հայաստանի անդրանիկ նահատակները, ս. Լուսաւորչի դարը՝ Հայոց դրի և գրականութեան ծնունդը, ուխտին հաւատարիմ հայ քրիստոնեաների անօրինակ մաքառումը մոգութեան դէմ և այլն։

Միւս կողմից՝ գրաւում են միտքս ժողովրդական հին աւանդութիւնների թանգագին մնացորդներն, այն է Առաջաւորաց ծումապահութեան ծէսերը՝ փոխինդն ու աղի բլիթը, «սիպտակ ձիաւոր» ս. Սարգսի զրոյցները, տէրընտաղի խարոյկը, բարեկենդանի խաղերն ու սովորութիւնները, մեծ պատին աների մէջ միմաս կախելն և այլն։

Այս ամենն իբրեւ խայտաբղէտ կենդանի պատկեր, որին նշանաւոր գոյն տուողը ժողովրդի կրօնական ոգին է, գալիս անցնում է մտքիս առջև, և գրգռում իմ հետաքրքրութիւնս։ Տեսնում եմ, որ դոքա մեհեկան ամսին տալիս են մի առանձնութիւն։ Միտքս կանգ է առնում ս. Սահակ Պարթևի, ս. Ղեոնդեանց և ս. Վարդանանց պատկառելի յիշատակների վերայ։ Գիտեմ, որ նոցա գործերն և բաղմարդիւն կեանքը վաղուց շատ գեղեցիկ նկարագրել են Եղիշէի և Փարպեցու օսկեղինիկ գրիչները։ Այդ ինչ այլ ևս չի զբաղեցնում։ Իմ միտքս գրաւում է առաւելապէս այն թէ ինչու մեր այդ նուիրական սրբերի յիշատակը հաստատուած է յատկապէս մեհեկան ամսի մէջ. չէ՞ որ ս. Սահակի երջանիկ փոխումն հանդիպել է 439 թուի նաւասարդի 30-ին (սեպտ. 9-ին), ս. Վարդանանց ճակատամարտն և մարտիրոսութիւնը 451 թուի Կարեբի 26-ին (յունիսի 2-ին) «գարնանային

ժամանակ» երբ «ճաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բաղմաց» իսկ ս. Ղեոնդեանց նահատակութիւնը 453 թուի հրոտից 25-ին (յուլիսի 31-ին)։ Դարելի է մտածել, որ անխորհուրդ չէ նաւասարդի մարերի և հրոտից ամիսների մէջ տեղի ունեցած անցքերի յիշատակը միահաւաքել իրենց տեղից հանել և բերել ամփոփել մի ամսի՝ և այն էլ մեհեկանի մէջ։ Եթէ անհրաժեշտ էր այդ տեղափոխութիւնն և ամփոփումն, այդ կարելի էր անել, տօներից մէկը միւս երկուսի հետ միացնելով յիշեալ երեք ամիսներից մէկում։ Չէ՞ որ այդպէս պատահել է ուրիշ տօների նկատմամբ. գիտենք, որ ս. Մեսրոպ թարգմանչի երջանիկ փոխումն եղել է 439 թուի մեհեկանի 17-ին (փետրուարի 19-ին), ս. Եղիշէ վարդապետի և ս. Գրիգոր Նարեկացու յիշատակը սահմանուած էր մեհեկանի 21-ին (փետր. 27-ին) և Վարազայ ս. Նշանի երեւման տօնը մեհեկանի 20-ին (փետր. 26-ին)։ Այդ տօներն այժմ մեհեկանից հանուած են և տեղափոխուած. միւսինքն ժամանակ ս. Մեսրոպի տօնը միացել է ս. Եղիշէի և ս. Գրիգոր Նարեկացու տօների հետ միասին մի օրուայ մէջ կատարուելու (այս տարի Սահմի ամսի 2-ին, որ է հոկտմ. 11-ին)։ Եւ այդպիսի տեղափոխութիւններ և ամփոփումներ եղել են շատ ուրիշ տօների նկատմամբ, որոնց թուելը շատ հեռու կտանէր մեզ։

Չենք կարող մտածել, որ այդպիսի փոփոխութիւնների պատճառը տամարադիր եկեղեցականների կամայականութիւնն է, կամ նոցա ազիտութիւնը, և կամ մի որ և է այլ հաշիւ։ Չենք կարող այդպէս մտածել նորահամար, որ մենք տեսնում ենք մի յայտնի համախմբութիւն։ Եթէ մեհեկան ամսի համար տեսելու լինինք, * այդ համախմբութեան մէջ մտնում են ս. Սահակ Պարթև և ս. Ղեոնդեանք և ս. Վարդանանք։ Տեսանք, որ նոցա պատմական յիշատակներն ամենևին չեն ընկել մեհեկանի մէջ. տեսանք, որ նոցա տօներ

* Այստեղ զանց ենք առնում յիշելու ս. Սուքիասեանց, ս. Ոսկեանց եւ ս. Առովմեանց տօների մասին, որոնք, թէև մեհեկան ամսի մէջ են կատարուում, բայց դարձեալ տեղափոխուած են ուրիշ ամիսներից. սոցա էւ նոյն համախմբութեան մէջ են։

ընդ տեղափոխուած և դրուած են այն ամսի մէջ, որի իսկական տօները տարուելի հաստատուել են ուրիշ ամիսների մէջ: Դ՛նչպէս բացատրենք:

Այստեղ կարելի է մտածել այն, որ այդպիսի համախմբութեան հիմքը մեհեկանի համար ընտրուած սրբերին առաջնորդող գաղափարն է եղել և որ այդ գաղափարը համապատասխան է եղել այն հին ժողովրդական աւանդութեանը, որ պահուած է Հայոց մէջ նոյն իսկ մեհեկան ամսի մասին:

Ի.

Եթէ ճանաչել ուզենք մեր ընտրած սրբերին առաջնորդող գաղափարները, կը տեսնենք, որ նոցա բոլորին ոգևորել է անպայման սէրն առ Աստուած և առ եկեղեցին: Այդ երջանիկ սիրոյ կապով նոքա կապուծ էին իրար հետ: Այդ սէրը նոցա ստիպում էր ուրանալ ամեն ինչ, որ հակառակ էր Աստուծոյ անուանը, և ուխտել հաւատարմութիւն առ հայրենական կրօնը և անձնուէր ծառայութիւն այն եկեղեցուն, որ իրենց փրկել էր հոգեւոր կորստից: Այդ սիրոյ գաղափարն և հաւատարմութեան ոգին հաւատացելոց մէջ հաստատուելու համար նոքա միևնոյն ժամանակ խօսքով և գործով հակառակ էին նենգաւորներին և դաւաճաններին, որոնցից և խորշեցնում էին ս. եկեղեցու ժողովրդին:

Այսպէս մենք տեսնում ենք, որ ս. Սահակ Պարթև հանդէս է բերում իւր շարականների մէջ մատնիչ Եղգային իբրև նշանական հաւատարմութեան, իբրև սիրոյ դաւաճանի, իբրև նենգութեան օրինակ: Եթէ դուք ընդունակ էք նոյնն զգալու ինչ որ ս. Սահակ անշուշտ ձեր սրտին էլ կը դիպչի այն, որ «արծաթսիրութեամբ մոլեալ, անօրէն աշակերտը» մատնեց «իւր մեծ վարդապետին», մոռնալով զգուծ սիրոյ նորա», դուք ևս ս. Սահակի հետ միասին նենգութեան համբոյր կը համարէք Եղգայի համբոյրը, որ եղաւ ընչան և առիթ մահու: Դուք ևս ս. Սահակի նման առանձնապէս կը շնչոտէ այն մաքի վերայ, թէ մատնութեան գաղափարին հետեւող մտորիկ չեն կարող մնալ նոյն հօտի, նոյն

ընկերական անմեղ շրջանի մէջ, և նորա հետ միասին կերգէք Փրկչի բերանով. «Մի ոմն ի ձէնջ, եղբարք, մատնելոց է զիս ի մահ և որոշի յաշակերտացոյ». դուք էլ այս ծանր խօսքերի տպաւորութեան տակ այնպէս կը շփոթուիք ինչպէս Փրկչի աշակերտները. «Բանն զոր ասաց Եիսուս, տրտմեցոյց զիւր աշակերտան եւ խռովեցան ամենեքեան»: Այ՛ն կը շփոթուիք, որովհետեւ գիտէք, համոզուած էք թէ յանդուգն են առհասարակ նենգութեամբ և դաւով ուրիշների կորուստը պատրաստող մարդիկ, որոնք նոյն չարիքն իրենց կեանքին էլ են նիւթում: այս աչքի առաջ ունենալով, ս. Սահակ Պարթև, ո՞ր գիտէ, որպիսի բարեպաշտական ծանր զգացումով երգում է մատնութեան հրաշալի շարականը.

«Ետը սքանչելիք այսօր տեսանեմք յաշխարհի ի մէջ հոգեղինաց. արարածք զԱրարչին սպանութեան խորհին զխորհուրդ»:

«Ու բանիւ իւրով զերկին և զերկիրս հաստատեաց, յոյնէ գոյացուցեալ՝ վաճառի այսօր դիւրագին ընդ երեսուն արծաթոյ»:

«Ո՛վ, Եղգաս արտասուելի երկնաւոր վարդապետին սպանութեան խորհի զխորխուրդ, մատնելով անօրինաց, զի խաչեսցի ի մէջ երկրի»:

Այդ ծայրայեղ ապերախտութեան երեւոյթը այն, որ արարածներն յանդգնում են Արարչի սպանութեան խորհուրդը խորհել, այն, որ աշակերտն յանդգնում է իւր ագահութեան պատճառով վաճառել իւր մեծ վարդապետին, որ և իւր Ստեղծիչն ու Փրկիչն է, այնքան ծանր է գալիս ս. Սահակին, որ փոքրիկ հօտից մերժուած Եղգային այլևս խաւարի որդի է ճանաչում:

Մերկացաւ յինքենէ զաստուածային սուրբ հոգին եւ զգեցաւ զսատանայ, որպէս հանդերձ արկաւ զիւրեաւ:*

Արդ՝ արծաթսիրութիւնը, ապերախտութիւնը, նենգութիւնը, յանդուգն խորհուրդներով Արարչին անհաւատարիմ գտնուելը մատնիչներին յատուկ են, և նոցա բաժանում անջատում են միաբանութեան սուրբ հօտից: Այդպիսիքն աստուածային սուրբ հոգին հա-

նեկ են իրենց վրայից և հագել են սատանային իրեն հագուստ։ Այս է ուսուցանում մեզ ս. Սահակ Պարթև իւր շարականներով և այս միևնոյնն ենք տեսնում և նորա գործերի մէջ։ «Ի՛նչպէս կը լինի որ ես փոխեմ իմ հիւանդ ոչխարս այն առողջ գազանի հետ, որի առողջութիւնն ինձ պատուհաս է»^{*} ասաց նա Հայոց նախարարներին, մերժելով նոցա չար խորհուրդը։ Եւ ի՛նչ էր այդ չար խորհուրդն, եթէ ոչ մի ստոր դաւաճանութիւն։ Ս. Սահակ լաւ համարեց կրել անարգանք, զրկանք քան միաբանելով մի ստոր դաւադրութեան պատճառ լինել ոչ միայն մի ազգի և եկեղեցու անարգութեան, այլ և իւր հոգու յաւիտենական կորստեանն և Յուդայի նման իւր անուան յաւիտեան նշաւակ լինելուն։

Ս. Սահակի հայեացքներն անցան նորա աշակերտներին և հետեւողներին։ Վրայ հասաւ Պարսից կրօնական հալածանքը։ Թէ եկեղեցական և թէ աշխարհական, թէ ծառայ և թէ ազատ ամենքն էլ ծակատ առ ծակատ հանդիպեցան ծանր հրապոյրների անարդար ճշման և տարօրինակ պահանջների։ Փորձութիւնը շատ մեծ էր, ստիպում էին ընտրութիւն անել Արարչի և արարածի, Մեծ Վարդապետի և մոլորեցուցչի, Փրկչի և կորուսչի մէջ։ Ոյժը պահանջում էր ընտրել վերջինը և խոտել առաջինը, վայելել աշխարհը, փայլիլ տեսանելի և շլացուցիչ փառքերով և պատիւներով, ճոխանալ այն մեծութեամբ, որ անցաւոր էր, և ստրկանալ կորստական ցանկութիւնների առաջ։ Համոզմունքը պահանջում էր ընդհատակի, որ եթէ մարդիկ մինչև անգամ անմահ էլ լինէին, Զրիստոսի սիրոյ համար մեռնէին. «Եթէ անմահք իսկ էաք, և մարթ էր մեզ մեռանել վասն սիրոյն Զրիստոսի, արժան էր։ Պատմութիւնը ցոյց է տալիս որ այդ ազգային հաւատը զօրաւոր հանդիսացաւ և զուէս բարձրացուց ոյժին զիմադրելու։ Ամենայն բազմութիւնն միաբանեաց, ասում է ականատեան Եղիշէ, ի մեծամեծաց մինչեւ ցիռքունս, անսոստ երդմամբ եղին վկայութիւն կենօր եւ մահու ի նմին կալ հաստատուն»։

Այսպէս հաստատուեցաւ հաւատոյ ուխտը

մի ամբողջ քրիստոնեայ աշխարհի մէջ այն ժամանակի երբ ոչ միայն չունէին ոչ թաղաւոր և առաջնորդ, ոչ արտաքուստ որ և է օգնական, և ոչ էլ ներսը մի մեծ զինուորութիւն, այլ և հանդէս էր զալիս հետզհետէ ներքին բաժանումն և պառակտումն, որ զբռնում էր պաշտպանութիւն նաեւ երկու հարեան տէրութիւններէ։ Բաժանման մէջ բռնականաբար հանդէս եկաւ ուխտին անհաւատարիմ մի կողմ, որի պարագլուխն եղաւ Վասակ Սիւնին, կարծես, մի նոր Յուդայ, որ, սնոտի յոյսերով խաբուած՝ իւր Մեծ Վարդապետին մասնեց մոգութեան հրէշի ձեռքը։

Ուխտին հաւատարիմ խումբը, որ մեծամասնութիւն էր, իւր նիւթական կամ աշխարհային տկարութեան մէջ շատ զօրեղ և անընկճելի էր հէնց նորանով, որ ինքն էր իւր տէրն և խնամակալը և իրեն զօրավիգն և պաշտպան էր ծանաչում Ամենակալ Թաղաւորին. «Օրէնք աստուածային կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութեան»։ Այս էր նոցա ուխտը, նոցա ինքնապաշտպանութեան գաշինքը։ Պարզ և անխաղաղ ուխտ, որին հաւատարիմ մնալու համար ուրիշ բան չէր պահանջուում, բայց եթէ այն որ իւրաքանչիւր որ իւր խղճի ազատութիւնը ծանաչէ և պաշտպանէ։ Այդպէս էլ եղաւ. Եղիշէն ասում է, որ Ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն և քահանայ։ Միաբանութեան և ուխտի հաւատարմութեան մեծ նշանն է այս, որ կարծամիտներին թերեւս բաժանումն երեւի։ Ամեն մարդ այնքան լաւ էր հասկանում իւր կոչումը, այնքան լուրջ էր ըմբռնում իրերի վիճակը, այնքան մեծ պատրաստականութիւն ունէր ուխտին հաւատարիմ մնալու, որ «ոչ երեւէր այնուհետեւ առաւել տէր քան զծառայ, և ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ, և ոչ որ քան զոր նուազեալ ի յորութենէ. մի սիրտ յօժարութեան ամենեցուն արանց և կանանց, ծերոց և տղայոց, և ամենայն միաբանելոց ի Զրիստոս»։ Ամեն որ ինքն իրեն համար և՛ եկեղեցի էր և՛ քահանայ, Թող բռնութեան ուժով այլեւս փակուէին բոլոր եկեղեցիները, թող խաբաղանով վարէին

^{*} Մ. Խորենացի Պատմ. Հայոց Գ. 65.

և շղթաներով կապելին ու փակելին բանտերի մէջ բոլոր քահանաներին և եպիսկոպոսներին, թնոյց ամեն տեսակ ճնշումներ թափուէին գործակալներին, մարդպանի և մոգական գնդերի միջոցով ուխտապահների պիտին՝ արգելելու նոցա հաղորդակցութիւնն իրար հետ: Կարելի չէր այդ ամենով խանգարել իւրաքանչիւրին միանալու մարդկութեան յաւանական Փրկչի հետ և ամեն մէկին իրեն համար լինելու և՛ եկեղեցի և՛ քահանայ:

Հոգեւոր կապով այսպէս միացած և անքակտելի միութեամբ այսպէս ամրացած քրիստոնեաների առաջ այլևս ի՞նչ էին ուրացողները, ուխտադրութիւնը, Եռագայի արժանաւոր աշակերտները: Նոքա վախկոտ, երկրաքարշ, երբեմն, միմիայն անստոյգ և վաղանցիկ շահերի համար ստրկացած մարդիկ էին: Նոցանից ամեն մէկը չգիտէր ի՞նչ է անում, կամ ո՞ւր է գնում: «Երանայն հոգմոյ շարժի, յամենայն բանէ խռովի, յամենայն իրաց դողայ»: Իսկ նոցա պարտադրու Վասակ Սիւնին գործում էր իւր ուրացող անուանն արժանի կերպով, նորա գործ դրած միջոցները շատ ստոր էին և անարգ: «Սկսաւ այնուհետեւ, ասում է Եղիշէն, պատրել զոմանս կարասով, եւ զոմանս ողորական քանիւք, զոմիկն ամենայն ահեղ քանիւք սպառնացեալ սրտաթափ առնէր: Հանապազօրդ առատացոյց զոմիկս տաճարին: Եւ յերկարէր զնուազն ուրախութեան, մաշելով գերկայնութիւն զիշերոյն յերգս արեւեցութեան եւ ի կօքաւ լկտութեան. քաղցրացոցանէր ոմանց զկարգս երաժշտական եւ գերգս հեթանոսականս. ըստում նենգութեամբ զանմեղ մարդիկ հրապուրէր եւ յինքն արկանէր»: Համոզմունքի ազնիւ ճանապարհը չէր, որով գործում էր անօրէնն Վասակ, այլ բարոյական ապականութիւն տարածելով անմեղ մարդիկների մէջ, զրգուելով և շողոքորթելով այնպիսի կրքեր, որոնք մարդկային դիւրագայթ բնութեան մէջ հանգէս են գալիս իբրեւ վայրկեական հրապոյր: Այդպիսիների համար է ասել մեր յաւիտենական Փրկիչը. Եւ որ ոք գայթակղեցուցէ, զմի ի փառքկանցս յայսցանէ, յիս հաւատացելոց, լաւ է նմա եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա և ընկղմիցի ի խորս ծո-

ղու (Մատթ. ԺԸ. 6): Եռագան ժառանգեց այդ վիճակը: Նոյնը ժառանգեցին ամեն ուրացողներն ու մատնիչներն իւրաքանչիւրն իւր ժամանակին համեմատ: Նոյնը ժառանգեց և անօրէնն Վասակ, նա դատապարտուեցաւ և ընկղմեցաւ վշտերի անհուն ծովի մէջ խեղդուելու. նա իւր անտանելի բանտի մէջ «հայէր ի միաբանութիւն սուրբ կապելոյն, հայէր և կարօտէր, և ոչ ոք խառնեաց զնա ի նոսա»: Այդ թշուառական ուրացողի անհաւատարմութեան այդ չար օրինակի վաղձանն աւելի պարզ ցոյց է տալիս թէ ո՞ր չափով զգուելի էին ինքն և իւր արբանակները. «Ոչինչ եթող չարիս ասում է Եղիշէն, զոր ոչ գործեաց ի կեանս իւր, և ոչ ինչ մնաց ի մեծամեծ չարեաց, որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա, և այն, որ կամէրն թագաւոր լինել մեղօք, ոչ երեւցաւ տեղի գերեզմանի նորա, ոչ յիշեցաւ անուն նորա ի մէջ սրբոց, եւ ոչ մատեալ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոյն»: Եւ այս եղաւ աշխարհային պատիժն այն անօրէն քրիստոնէի համար, որ ուրացաւ իւր եկեղեցին, դաւեց իւր հայրենի կրօնին, մատնեց իւր հաւատակիցներին և բռնացաւ նոցա խոյժի ազատութեան և հայրենական սուրբ աւանդների վերայ:

Իսկ նոքա, որոնք հաւատարիմ մնացին ս. եկեղեցուն, թէեւ անթիւ են և անհամար, ունեցան և շատ պանծալի առաջնորդներ, որոնք և ժառանգեցին անթառամ պատկը: Դոքա են ս. Վարդանանք և ս. Ղևոնդեանք, առաջիններն աշխարհական կարգից, երկրորդներն եկեղեցական: Անտեղի է կրկին յիշատակել, որ նոքա իբրեւ ս. Սահակ աշակերտներ առաջնորդուած էին նոյն զաղափարով, նոքա իրենք եղան բոլոր ուխտապահ զնդին ուղղութիւն տուողը կրօնական մաքառման ժամանակ. նոքա իրենց անձնազոհութեամբ կենդանի օրինակ եղան ամենքին՝ թէ մերձաւոր ժամանակակիցներին և թէ ապագայ սերունդներին՝ հաւատարիմ մնալու եկեղեցու սուրբ ուխտին, աննենդ սիրով սիրելու և պաշտպանելու ս. Լուսաւորչի աւանդն և ընդ միշտ երջանկանալու հոգեւոր կենդանութեան մէջ: Նոցա պատմական նշանակութիւնը բարձրացնողը ոչ նոցա զինուորական քաջութիւնը

կամ նիւթական գրկանքներն են: ոչ նոցա անօրինակ համբերութիւնը կամ եռանդուն միջամտութիւնը: ոչ նոցա ճարտար վարդապետութիւնները կամ հրապարակական յորդորները: Այդ ունին և ունեցել են շատ ուրիշ պատմական անձինք: Մեր օուրը նահատակներին մեծ է անուամ իրենց որդին: այն որդին որով նոքա վկայեցին աշխարհի առաջ հաւատոյ ճշմարտութեան մասին: յայտնեցին իրենց անպայման հաւատարմութիւնն առ Աստուած և իրենց աննենգ սէրն առ ս. եկեղեցին՝ առանց հրաժարուելու որ և է աշխարհային այլ պարտականութիւնից: նոքա պարզապէս վկայ եղան պատմութեան մէջ, թէ ինչպէս քրիստոնեայ լինելը չի խանգարում հաւատարիմ և օգտակար հոգատակ լինել մի այնպիսի տէրութեան: որի մէջ իշխող կրօնը տարբեր է քրիստոնէութիւնից: Նոքա իրենց հալածողներին ասում էին ի լուր աշխարհի: Արդ արեւելք և արեւմուտք գիտացին զձեր աստուածամարտի լինել և զմեզ ի զուր սպանանել ի վերայ ամենայն վաստակոյն մերոց: Վկայ են մեզ երկինք երկնաւորօք և երկիր երկրաւորօք: եթէ չեմք ինչ մեղուցեալ ի միտս մեր անդամ: Թիշելով: որ ամենայն հնազանդութեամբ ամեն անսովոր տուրք և հարկ յանձնառու են եղել վճարելու տէրութեան զանձարանին: նոքա հարցնում են թագաւորին. «Ասան է՛ր յուզեալ իցէ ցասումնս այս ի վերայ մեր: ասա դու մեզ զպատճառս վնասուն: եթէ օրէ՛նքն մեր պատճառք իցեն անվաստակ լինելոյ առաջի քո: Նոքա այն աղնիւ քրիստոնեաներն են: որ հաստատեցին և պնդեցին թէ եկեղեցին թագաւորական պարգև է: որ յետ խլուի և ոչ էլ որ և է մարդկային ճարտարութեան արդիւնք: որ ջնջուի: Եկեղեցին շնորհք է մեծի Աստուծոյ: ոչ միում ումեք ի մարդկանէ տուեալ: այլ ամենայն բանաւոր ազգաց: նորա հաստատուն հիմունքը ոչ ոք չի կարող խախտել. և այս հիմունքի վերայ հաստատուած հաւատացելոց ուխտը նոյնպէս անզրկուելի է: «զոր երկինք և երկիր ոչ դողացուցանէ: մի՛ ոք ի մարդկանէ խրոխտացի յաղթել նմա:»

Արեւելքի պատմութեան մէջ չկայ այնպիսի մի դեղեցիկ ապացոյց: ինչպէս այս օուրը նահատակների անօրինակ մաքառումն է: եկեղեցու հօտին պերճախօս մի օրինակ տալու թէ ինչպէս կարելի է հաւատոյ ուխտին հաւատարիմ մնալ և անխախտ պահել սիրոյ դաշինքը յաւիտենական Մեծ Վարդապետի հետ:

Վ.

Ս. Սահակի և ս. նահատակների դաժախտներին նայելով: կարող ենք ասել: որ նոքա ուխտի հաւատարմութեան և աննենգ սիրոյ ներկայացուցիչներ են պատմութեան մէջ:

Միում է այժմ պարզել թէ ինչո՞ւ դաւաճաններին և մատնիչներին հալածող սրբերի ամիսը մեհեկանն է: և այս անգ են համախըմբուած հաւատարմութեան և ուխտի սրբութեան յիշատակները:

Այս կարող է ունենալ այլ և այլ պատճառներ: որոնք: որքան գիտենք: դեռ հետազօտուած չեն: Սակայն մեզ աւելի հաւանական է երեւում այն: որ մեհեկան ամիսն ինքը հեթանոսութեան ժամանակ և նոյն իսկ հոյ ժողովրդի աւանդութիւններով: եթէ կարելի է այսպէս ասել: ուղիւստի ամիս է:

Հին աւանդութեամբ Մեհեկանն Հայկի և օթներորդ որդին է: * այս ցոյց է տալիս: որ այդ ամիսն ազգային է: օտար չէ: Շորա անունը բացատրուում է այսպէս. Հայոց հին աստուածներից մէկը կոչուում էր Միհր: որ մեծին Արամազդայ որդին է: Միհրի ասուելի ամիսը կոչուում է միհրական կամ մեհեկան: իսկ նորա պաշտամունքի անդը մեհեան: նոյն անունից են աւելում իրենց ծագումն հին հայկական անունները Մեհեհիդակ: Մեհրուժան: Մեհնունիք ** և այլն: Միհրի մեհեաններից մէկը գտնուում էր Դերջանի դաւառի

* Հայկազ. քառ. տնս Նաւասարդ:

** Մեր կարծիքով Միհր անունն Հայոց հին ժողովրդական ծննդ եղել է Մեհր. այս ծննդ են կազմուած և յատուկ անուններն Մեհնեղակ կամ Մեհնեանդակ (Միհրի ծառայ): Մեհրուժան (Միհրազօր): Նմանապէս և մեհեկան և մեհեան խօսքերը: իսկ ուղղակի Միհր անունից կազմուած անունները՝ Միհրան: Միհրդատ: Միհրնեքէ: և այլն: յատուկ են օտար ցեղակից ազգերն և Հայոց անուններ շին:

Բազայառիչն աւանում Եփրատ գետի վերայ (այժմ Պեքերիչ): Իսկ արդի ժողովրդական աւանդութիւնների մէջ Միհրի անուան հետ կապ ունի Սասունցի Դաւիթի որդու Մհերի ընդարձակ առասպելը և Վանայ ժայռի վերայ Մհերի դրան զրոյցը: Ակնհերե է, որ Միհրը աստուածն ունեցել է Հայոց մէջ ընդարձակ ժողովրդականութիւն և այդ խկապէս այն պատճառով, որ նորա կոչումը շատ մեծ առնչութիւն ունի ժողովրդական կեանքի հետ: Եթէ պարզելու լինինք նորա գոյութեան դադարը, Հայոց հին աւանդութիւնների մէջ աւելի որոշ անդեկութիւններ չունենալով, ստիպուած ենք դիմել հարեան ցեղակից հին աղբերի աւանդութեանը:

Մեր Միհր կամ ժողովրդական Մհեր, Մեհեր անունը նոյնն է ինչ որ Զէնտավէստայի մէջ Միթրա, որ և ծանօթ էր հին Պարսկացի Եռնաց և Հոփմայեցեոց: Այդ անունը կազմուած է միտ արմատից, որ զանգիկի մէջ նշանակում է կապել, մօտեցնել, հաշտեցնել, իսկ սանսկրիտի մէջ սիրել: Այսպէս՝ Միթրա իբրեւ աստուծոյ անուն—նշանակում է միջնորդ, հաշտեցուցիչ, իսկ իբրեւ հասարակ անուն—գաշինք: Սա է հին Պարսից և Բակտրիացեոց մէջ այն աներեւոյթ ոգին, որ միջնորդ է լոյսի և խաւարի մէջ, ինքն է լոյս աստուածը, միջնորդ և հաշտարար է մարդու և Արամազդի մէջ, եթերի իշխանն է, հաւատարմութեան պաշտպանն է և ուխտադրութեան պատուհասը: Իբրեւ հսկող հաւատարմութեան վերայ և իբրեւ երկրի պահպան նա ունի բիւր աչք և հազար տկանջ, ամեն բան տեսնում է, ամեն բան լսում, հսկում է գողերի և դաւաճանների վերայ, նորա հակառակորդներն են դրուքները (դրութ), որոնք գիշերային չար ոգիներ են և մոլորեցնում են մարդիկներին: Հրապուրում են նոցա գողութեան, անհաւատարմութեան և դաւադրութեան. Միթրան երեւում է և նոքա անհետանում են. նոցա դործունէութիւնը լինում է խաւարի մէջ, մութ տեղերում, զիշեր ժամանակ, երբ Միթրան չի երեւում երկրի վերայ. իսկ երբ արշալոյսը մօտենում է, հալածուում են չարերն և անյայտանում է, հողերն ու դաւաճանները: Նորա տեսա-

նելի պատկերն երկնքում արեգակն է, երկրի վերայ հուրը, որ լոյս է տալիս մթութեան մէջ: Ահարիու է Միթրան ամենի վերայ, նա է, որ պատժում է նենգութիւնը, դաւաճանութիւնն և անհաւատարմութիւնը մարդիկների մէջ: Նորա պաշտամունքը կատարուում էր լեռների և բարձրաւանդակների վերայ, որոնք առաջինն են արեւի ծագումը ողջունում. նորա հովանաւորութեան տակ են նմանապէս լայնատարած արօտներն ու մարգագետիններն իրենց արօտականներով: *

Այսպէս է Միհրի (Միթրայի) գաղափարն Հայոց ցեղակից աղբերի մէջ, այսպէս էր անշուշտ և Հայերի մէջ: Երկնքի և երկրի արարչի՝ ամեծին արւոյն Արամազդայ՝ ծնունդն է Միհր, նոյն լուսոյ աստուածը, նոյն հաշտութեան միջնորդը, նոյն պահպանն հաւատարմութեան և նոյն պատուհասողը նենգութեան: Նորա մեհերանում մի ժամանակ դրուած էր Եռնաց Հեփեստոսի պատկերը, որ ցոյց է տալիս թէ նա ճանաչուած էր իբրեւ հրոյ աստուած: Միհրի տօնին, մեհեկան ամսին, Հայոց զեղածիծաղ բարձունքը պայծառանում էին բոցավառ խարոյկներով, որոնք մինչև օրս էլ վառուում են փետրուարի 13-ին երեկոյեան: Այս խարոյկներն իրենց հանդիսական ծէսերով առանձին կենդանութիւն են տալիս ժողովրդին: Պարոյկի շուրջը բոլորում են ամենքը, նոր առաքատ հարսներն ու փեսաները պարում են նորա շուրջը, երիտասարդներն և կոյսերը, տղաներն և աղջիկները ցնծութեան աղաղակներով թռչկոտում են նորա վերայից: Ամեն ոք նորա խանձողներից մի կտոր տանում է իւր տունը պահելու. իւրաքանչիւր ոք մի ծէս ունի կատարելու այնտեղ. որը իւր հանգերէից մի բան է խանձում, որ չար բանի չհանգիպի. որը նորա մոխիրը տուն է տանում գեղի համար պահելու, կամ մարգերի և ածուկների մէջ շաղ տալու և այլն: Գուշակութիւններ ևս լինում են այդ խարոյկի վերայ. եթէ ծուխն ու բոցը դէպի աղօթարան ուղղուին, նշան է, որ տարին բարի կը լինի, կամ եթէ դէպի արտերի կողմն ուղղուին,

* Iusti, Handb. № Zendsp. 232 etc. Spiegel, Comm. d. Avesta I. 118, II. 56, 547.

բարերբեր կը լինի (Մանանայ, 108): Այդ է իսկապէս արդի Հայոց տէրընտաղը, որ տեղ տեղ տէրնտես կամ գրընդէզ էլ է ասուում: Եթէ պատկէս կարելի է ասել մի ուխտագրութիւն է այդ, որ ունի իւր հնութեան դրօշմը: ամեն մի հաւատալիք, ամեն մի անտօնապաշտութիւն, որ նկատելի է այդ ծէսի մէջ, տեղիք է տալիս մտածելու, որ ժողովուրդը ճանաչում է եղել մի աներեւոյթ ոգի կամ զօրութիւն, որի հովանաւորութեան ներքոյ են իւր տունը, արտը, այգին, բաղդը և այլն. այդ ոգին է, որ կարող է նորան պաշտպանել չարից: Այդ է նշանակում խանձողը տուն տանել, լաթերը խանձել, մոխիրն ածուների մէջ շաղ տալ և այլն: Քանի որ խարդիկ վառուում է արեւի մայր մտնելուց յետոյ, հասկանալի է, որ գիշերային չար ոգիների ներգործութիւնից պաշտպանելու համար են բռնանում Հայոց կտուրների և բաց հրապարակների վերայ փայտակոյտ այդ կրակարանները:

Միհրի այս յիշատակների հետ անշուշտ կապ ունին և մեհեկանի այլ ժողովուրդական ծէսերն և սովորութիւնները: Առաջաւորաց շաբթուն երիտասարդներն և կոյսերն ուխտաւոր են լինում իրենց համար: Զերմեռանդներն ուխտը պահում են, մի շաբաթ շարունակ հրաժարուելով կերակրից: Վերջին երեկոն նոքա իրենց ծովը բաց են անում փոխինդով, հաւատում են, որ իրենց ուխտն ընդունել և իրենց սրտի փափազը կատարել կարող է ս. Սարգիս, և այդ կլինի, եթէ ուրբաթ գիշեր լոյս շաբաթ «սիւտակ ձիււորն» անցնի այն տան միջով, և նորա ձիււ սմբակը դրօշմէ փոխինդի վերայ իւր պայտի նշանը: Լինում են այդ ժամանակ և այլ տեսակ ուխտաւորներ, որոնք իրենց ծովը սրբութեամբ պահելուց յետոյ ուրբաթ երեկոյ ուտում են միայն աղի բլիթ և ծարաւ քնում են այն հաւատով, որ գիշերն իրենց ցանկալի անձանօթ մէկը քնի մէջ ջուր կուտայ խմելու: Այսպէս անում են մեծ մասով նորահաս կոյսերն և երիտասարդները, որոնք ընտրել են ուզում իրենց կեանքի ապագայ ընկերին: Ուրբան իրատական է մեզ համար, որ այդպիսիներն և առհասարակ Առաջաւորաց շաբ-

թու ուխտաւորները գտնում են իրենց ըզձի կատարումն այն ժամանակ, երբ համոզուած են, որ սրբութեամբ և հաւատարմութեամբ են պահել իրենց ուխտը: Ուրջանիկ պարգութիւն հին ժամանակների:

Դժուար չէ մտածել, որ մեհեկան տօների հետ կապ ունին և բարեկենդանի խաղերը: Այստեղ առանձնապէս ուշադրութեան արժանի են այն ձիարշաւներն և մրցումները, որ լինում են կարիճների մէջ: Կարծես ամեն ոք կամենում է նոյն իսկ խաղի վտանգաւոր վայրկեանն անգամ հաւատարմութեամբ և անխարդախ գերազանցել մրցման մէջ: Ուխտի նշան է նոյն իսկ բարեկենդանին մեռելոց յիշատակութիւն անելը, երբ ողորմութիւն և կերակուր է բաժանում աղքատներին իրրեւ նոր ննջեցեալների հոգու բաժինը բարեկենդանից: Ուրախ խաղերի մէջ այս տխուր ծէսը նշան է ժողովրդի շատ բարձր բարոյականութեան:

Սոյն մեհեկանի մէջ չէ մտացել ս. Եկեղեցին յիշեցնելու և մի այլ ուխտ, մի այլ դաշինք, Այդ է Կ. Պօլսի տիեզերական ս. Ժողովի յիշատակը, որ կատարուում է բարեկենդանի շաբաթ օրը: Այդ օրն, երեւի ամեն մի հայ քրիստոնեայ մտաբերում է այն նշանաւոր դարն, երբ աստուածուրաց Մեհրուժանների և հոգեմարտիկ Մակեդոնների դէմ զինուեցաւ Զրիստոսի ս. Եկեղեցին իւր հարիւր և յիսուն հայրապետներով, որոնցից մէկն էր և հայրն ս. Սահակ Պարթևի՝ ս. Երեսէս Մեծն: Ո՛րպիսի վտանգից ազատեց մեզ այդ սուրբ հայրապետը: Եւ զինեց մի ամբողջ քրիստոնեայ աշխարհ և ինքն զինուեցաւ նոյն աշխարհաւոր ուրացութեան դէմ, և հալածեց ուխտադրուժ Մեհրուժանին և իւր հետեւողներին: Զրիստոնէական եկեղեցու մի միաբանութեան յիշատակի օրն է բարեկենդանի այդ օրը և մեր եկեղեցին երգելով Ո՛վ հրաշալի նախահարբը, և առ վայր մի ծածկելով ս. սեղանը վարագուրով, ցոյց է տալիս, որ բնաւ չունի մասն և բաժին հերձուածողների և ուրացողների հետ:

Իսկ նոյն շաբաթ օրն երեկոյին ս. եկեղեցին «Բանդ որ ընդ Հօրն» երգելով մեզ յիշեցնում է նախամարդու պատուիրանազան:

ցութիւնը և ս. սեղանը վարագուրով ծածկուած է իրրե նշան դրախտի դռներն այն մեղաւորի առջև փակելու: օրին ապա իւր խաչի մահով սրբեց, արգարացուց մեր Փրկիչը:

Այնուհետեւ դալիս է քառասնորդական պահքը, որ իւր հետ բերում է ապաշխարութեան օրեր: ապաշխարութեան, որ այժմ շատ պէտք է ամեն տեսակ մեղաւորի համար, բայց առաւել նոցա, որոնք դրժել են սուրբ ուխտին, դաւել են ընկերին, նենգել են սրբութեան գաղափարն, և Յուդայի ու Վասակի քայլերով առաջնորդուած՝ պատճառ են եղել ընկերի կորստեանը կամ ապականութեանը:

Մի գուցէ երեսաներին ևս քառասնորդական պահքուց խորհուրդն յիշեցնելու նպատակով աւանդութիւնն յօրինել է այն հրէշանման միմուսը, որ մեծ պատի հէնց առաջին օրը կախում են իւրաքանչիւր տան մէջ երգիկից: Այդ միմուսս ասածն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի սոխի գլուխ վրան շրջանաձև եօթըն հատ փետուր ցցուած մեծ պատի եօթն շաբաթների թուով (տեղտեղ նորան ասում են ալլատիդ, ախողջ)՝ իւրաքանչիւր շաբաթ հանում են նորա մի փետուրը, մինչև որ խլերջոյ Ս. Զատիկի շաբթին վար են առնում և սոխը Վայ, որ իւր ուխտը քանդէ և մեծ պատը խռռէ, երգիկից մի մեծ քար կ'ընկնի այն ուխտադրուժի զլխին, այսպէս են բացատրում միմուսի ահաւոր նշանակութիւնը մեր պառաւնները:

Եթէ Մեհեկան ամսի երեսնօրեայ շրջանն աչքի առաջ ունենալով, մտաբերենք, որ հեթանոսութեան ժամանակ այդ ամիսն ամբողջապէս միհրական տօներին էր նուիրուած, որից և առել է իւր անունը, այն ժամանակ շատ հասկանալի է թէ ինչո՞ւ համար քրիստոնէական ուխտապահ գնդի ներկայացուցիչները տօները միահաղոյն նոյն ամսի մի օրը չէ նշանակած, այլ բաժանած է չորս տեղ այն է Ս. Առովմեանց, Ս. Սահակայ Պարթևի, Ս. Ղեոնդեանց և Ս. Վարդանանց, որոնց հետ միանում են և ժողովրդական հին յիշատակներն Առաջաւորաց պահքի և բարեկենդանի օրերում: Այդպէս և պէտք է լինէր, որովհետեւ մեհեկանն այլևս հեթանոսական տօների ամիսը լինել կարող չէր, թէպէտև պահում

էր իւր անունն և քրիստոնէութեան ժամանակ, Բնական է, որ ծէսերն և սովորութիւններն այնպէս դիւրութեամբ չեն ոչնչանում: Կրօնը թէև փոխուեցաւ, բայց ժողովրդի մէջ արմատ ձգած կրօնական, բարոյական գաղափարները կենդանի մնացին: Ոչ ոք չէր կարող նոցա մեռցնել, քանի տակաւին կենդանի էր ինքը ժողովուրդը: Եկեղեցին այդ շատ լուհասկացաւ, սւստի և հեռատեսութեամբ և խնամքով նոյն ժամանակին յարմարեցուց այնպիսի սրբերի յիշատակութիւն, որոնք նոյն հին գաղափարի կենդանութիւնը պահպանում և արծարծում են ժողովրդի մէջ:

Կ. Կ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՆՑԵԱԼ 1896 Թ.՝ քրիստ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՀԱՄԱՌՈՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Քրիստոնէական տեսակէտից վերջին տարեշրջանը ընդհանրապէս առած շատ աղքատ է միեմարական երեւոյթներով, և ընդհակառակն հարուստ, գոնէ մեզ համար, տխուր յիշատակներով:

Վաթուրիկ եկեղեցին այս անգամ՝ ևս հանդէս բերաւ ընդարձակ ծրագիրներ և փայլուն ձեռնարկութիւններ, որոնց արդիւնքը սակայն մեծ մասամբ շնչին է և հետեանքը անյաջող, — Լաբեշտանի Մեհեկիթ թագաւորի մօտ ուղարկած պատուիրակութիւնը, դէպի Ֆրանսիական ազգը, նորա միրտութեան 1400-ամեակի առթիւ, ցոյց տուած համակրութիւնը և այլ մանր մունր միջոցները, որոնցով պապը աշխատում էր իւր քաղաքական ազդեցութիւնը զօրացնել և երեան էր հանում իւր իշխանասիրական ձգտումները, նոր ապացոյցներ բերին միայն թէ նա սխալ ճանապարհի վերայ է գտնուում՝ այնտեղ հեղինակութիւն և զօրութիւն որոնելով, ուր վաղուց անդառձ կերպով կորցրել է և երբէք ունեցած պէտք է չլինէր, — Անդիկան եկեղեցու հետ միութիւն հաստատելու համար արած փորձերը, որոնք սկզբում ըստ երեւոյթին շատ բան էին խոստանում, անհետեանք անցան նոյնպէս և համոզեցին կրկին շատերին, որ հռովմէական եկեղեցին իւր արդի կազմակերպութեամբ անընդունակ է դժբաղդարար գաղափարական ձգտումների տեղի տալու, և միութեան վսեմ գաղափարի վերայ միայն իւր նեղ աշխարհակալական տեսակէտից նայել կարող է: